**Տեսահսկման ծառայության պայմաններն ու փաթեթները**

1. «Տեսահսկման» ծառայության շրջանակում գործում են հետևյալ ծառայությունները՝
   - «Արխիվային պահոցի վարձակալություն» ծառայություն,
   - «Հարթակի օգտագործում» ծառայություն:
2. «Արխիվային պահոցի վարձակալություն» ծառայությունը տրամադրվում է՝

**3.1** 1 (մեկ) օր տևողությամբ,

**3.2** 3 (երեք) օր տևողությամբ,

**3.3** 7 (յոթ) օր տևողությամբ,

**3.4** 14 (տասնչորս) օր տևողությամբ,

**3.5** 30 (երեսուն) օր տևողությամբ,

**3.6** 45 (քառասուն հինգ) օր տևողությամբ,

**3.7** 90 (իննսուն) օր տևողությամբ,

**3.8** 90 (իննսուն) օր տևողությամբ, միայն իրադարձությունների արխիվավորում:

**3.9** 90 (իննսուն) օր տևողությամբ, լիարժեք արխիվավորմամբ:

**3.10** «Արխիվային պահոցի վարձակալություն» ծառայությունը տրամադրվում է ստորև ներկայացված Աղյուսակ 1.1, Աղյուսակ 1.2, Աղյուսակ 1.3-ում սահմանված գնացուցակներով:

**Աղյուսակ 1.1. «Արխիվային պահոցի վարձակալություն»** ծառայության գնացուցակ Մանրածախ հաճարորդների համար.

| Արխիվային պահոցի վարձակալության տևողություն | Արխիվային պահոցի վարձակալության վճար |
|---|---|
| 1 (մեկ) օր | 1650 դրամ |
| 3 (երեք) օր | 2100 դրամ |
| 7 (յոթ) օր | 3000 դրամ |
| 14 (տասնչորս) օր | 4100 դրամ |

Գները ներկայացված են ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ:

**Աղյուսակ 1.2. «Արխիվային պահոցի վարձակալություն»** ծառայության գնացուցակ Մեծածախ հաճարորդների համար.

| Արխիվային պահոցի վարձակալության տևողություն | Արխիվային պահոցի վարձակալության վճար |
|---|---|
| 3 (երեք) օր | 1600 դրամ |
| 7 (յոթ) օր | 2200 դրամ |
| 14 (տասնչորս) օր | 3300 դրամ |
| 30 (երեսուն) օր | 5400 դրամ |

| | |
|---|---|
| 45 (քառասուն հինգ) օր | 7100 դրամ |
| 90 (իննսուն) օր | 12300 դրամ |

Գները ներկայացված են ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ:

**Աղյուսակ 1.3. «Արխիվային պահոցի վարձակալություն»** ծառայության գնացուցակ "Պատվերների ընդունման կետ" հաճարորդների համար.

| Արխիվային պահոցի վարձակալության տևողություն | Արխիվային պահոցի վարձակալության վճար |
|---|---|
| 90(իննսուն) օր տևողությամբ միայն շարժման պահպանում, 512 կբ/վ | 2700 դրամ |
| 90(իննսուն) օր տևողությամբ, ամբողջական պահպանում | 6750 դրամ |

Գները ներկայացված են ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ:

**3.1** «Արխիվային պահոցի վարձակալություն» ծառայության շրջանակում ժամանակավոր կասեցում ծառայությունը՝ գործում է համաձայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենների թիվ 032-06-2017-Հ5-L հրամանով սահմանված «Ժամանակավոր կասեցում» ծառայության պայմանների:

3. **«Հարթակի օգտագործման վճար»** ծառայությունը տրամադրվում է Աղյուսակ 2-ում սահմանված գնացուցակով:

**3.1.** **Աղյուսակ 2. «Հարթակի օգտագործում»** ծառայության գնացուցակ.

| | |
|---|---|
| «Հարթակի օգտագործում» յուրաքանչյուր տեսախցիկի համար | 750 դրամ |

Գները ներկայացված են ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ:

**3.2.** **«Հարթակի օգտագործում»** ծառայության գինը ներառված է **«Արխիվային պահոցի վարձակալություն»** ծառայության գնացուցակում:

**3.3.** **«Հարթակի օգտագործում»** ծառայության շրջանակում հասանելի է Ժամանակավոր կասեցում ծառայությունը՝ համաձայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենների թիվ 032-06-2017-Հ5-L հրամանով սահմանված «Ժամանակավոր կասեցում» ծառայության պայմանների:

**4.** Սույն հրամանի կիրառության մեջ մտնելու պահից գործողության մեջ դնել **«Տեսախցիկների վարձակալություն» ծառայությունը** :

**4.1.** **«Տեսախցիկների վարձակալություն»** ծառայությունը տրամադրվում է ստորև

ներկայացված Աղյուսակ 2-ում սահմանված տեսախցիկների մոդելներով և գնացուցակով:

**4.2.** **Աղյուսակ 3. «Տեսախցիկների վարձակալություն»** ծառայության գնացուցակ.

| Տեսախցիկի մոդել | Տեսախցիկի վարձակալության ամսավճար |
|---|---|
| Uniview IPC-3F22P-RB28 | 800 դրամ |
| Dahua IPC-HFW1230SP v2 | 800 դրամ |

Գները ներկայացված են ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ:

**4.3.** Ֆիզիկական անձանց դեպքում՝ յուրաքանչյուր տեսախցիկի տեղադրման համար, սահմանվում է միանվագ վճար՝ 30 մետրից ավել եղած յուրաքանչյուր մետրի համար 500 դրամ հավելյալ վճար: Գները ներկայացված են ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ:
Իրավաբանական անձանց դեպքում՝ գործում է երկու տարբերակ.

1. Մինչև 10 տեսախցիկի միացման դեպքում՝ յուրաքանչյուր տեսախցիկի տեղադրման համար, սահմանվում է միանվագ վճար՝ մինչև 30 մետր լարանցման դեպքում՝ 10000 դրամ, և 30 մետրից ավել յուրաքանչյուր մետրի համար 500 դրամ հավելյալ վճար: Գները ներկայացված են ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ:
2. 10-ից ավել տեսախցիկների դեպքում՝ յուրաքանչյուր տեսախցիկի տեղադրման համար, սահմանվում է միանվագ վճար՝ ելնելով բաժանորդի մոտ առկա տեխնիկական խնդիրներից և ներկայացրած պահանջներից: Գները ներկայացված են ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ:

**4.4.** Տեսախցիկը/ները մնում է/են Օպերատորի սեփականությունը:

**4.5.** Տեսախցիկի/ների տեղադրումն ու ապամոնտաժումը կարող է կատարվել նաև Օպերատորի կողմից:

**4.6.** «Տեսախցիկների վարձակալությունը» տրամադրվում է միայն Օպերատորի հասանելիության ծածկույթում:

**4.7.** Տեսախցիկի/ների ապամոնտաժումը կատարվում է Օպերատորի կողմից՝ տեսախցիկը անջատելու (կամ գործող պայմանագիրը դադարեցնելու) պահանջով: Տեսախցիկի/ների ապամոնտաժումը կատարվում է առանց լրացուցիչ վճարի գանձման:

**4.8.** «Տեսախցիկների վարձակալություն» ծառայության շրջանակում հասանելի չէ «Ժամանակավոր կասեցում» ծառայությունը:

4.9. Տեսախցիկների վարձակալություն» ծառայությունը չի կասեցվում վճարումների ուշացման պատճառով: «Տեսախցիկների վարձակալություն» ծառայության շրջանակում տրամադրված տեսախցիկի/ների համար սահմանված ամսավճարը/ները հաշվեգրվում է/են այնքան ժամանակ մինչև Բաժանորդային պայմանագրով նախատեսված պայմանագրային հարաբերությունների ավարտը:

5. Սույն հրամանի կիրառության մեջ մտնելու պահից գործողության մեջ դնել **«Տեսախցիկների վաճառք» ծառայությունը** :

5.1. **Աղյուսակ 4. «Տեսախցիկների վաճառք»** ծառայության գնացուցակ.

| Տեսախցիկի մոդել | Տեսախցիկի վաճառքի արժեք |
|---|---|
| Uniview IPC-3F22P-RB28 | 22200 դրամ |
| Dahua IPC-HFW1230SP v2 | 22200 դրամ |

Գները ներկայացված են ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ:

## 6. Անցումներ

6.1. «Տեսահսկման» ծառայությունից անցում Օպերատորի այլ ծառայությունների հնարավոր չէ: Օպերատորի այլ ծառայություններից անցում «Տեսահսկման» ծառայությանը հնարավոր չէ:

## 7. Այլ պայմաններ

7.1. Եթե Բաժանորդին տրամադրված «Uniview IPC-3F22P-RB28» և «Dahua IPC-HFW1230SP v2» մոդելների տեսախցիկները վնասվել են (վնասվածքը չի հանդիսանում «Uniview IPC-3F22P-RB28» և «Dahua IPC-HFW1230SP v2» մոդելների տեսախցիկների գործարանային թերության հետևանք) կամ կորել են, ապա Բաժանորդը պարտավոր է փոխհատուցել Օպերատորին Սարք(երի)ի հանձնման-ընդունման ակտ(եր)ում նշված գինն ամբողջությամբ՝ վնասման և/կամ կորստի փաստն արձանագրվելու պահից հաշված 3 (երեք) բանկային օրվա ընթացքում:

7.2. Եթե տեսախցիկը կորել է ոչ Բաժանորդի գործողության և/կամ անգործության հետևանքով պայմանավորված, ապա Բաժանորդը պատասխանատվություն չի կրում կորստի համար, եթե վերջինս Օպերատորին ներկայացնում է ՀՀ իրավապահ մարմինների որոշումը այդ գործի մասով:

7.3. Եթե առկա չէ ՀՀ իրավապահ մարմինների որոշումը գողության արթիվ Բաժանորդի մեղավորությունը բացառելու մասին , ապա Բաժանորդը պարտավորվում է վճարել

Օպերատորի կողմից սահմանված տուգանքը՝ սույն հրամանի 7.1 ենթակետում սահմանված կարգով:

**7.4.** Եթե Բաժանորդը կատարում է հասցեի փոփոխություն, ապա Օպերատորը պատավորվում է ապամոնտաժել տեսախցիկը/ները գործող հասցեից և տեղադրել տեսախցիկը/ները նոր հասցեում՝ համաձայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ գլխավոր տնօրենների թիվ 017-08/15-Հ5-Լ հրամանով սահմանված «Հասցեի փոփոխություն» ծառայության պայմանների:

**8.** Սույն հրամանը կիրառության մեջ է մտնում ստորագրման պահից:

**9.** Սույն հրամանով սահմանված պայմանները գործողության մեջ են մտնում 30.04.2024թ.-ից:

**10.** Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կոմերցիոն տնօրենին: